| 4712 | -Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող | 4819 | 510.0 | 510.0 | | 510.0 | 510.0 | | 50,0 | 50,0 | |
| 4720 | *ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ* (տող4721+տող4722+տող4723+տող4724) | x | 220.0 | 220.0 | | 220.0 | 220.0 | | | | |
| | որից` | | | | | | | | | | |
| 4721 | -Աշխատավարձի ֆոնդ | 4821 | | | | | | | | | |
| 4722 | -Այլ հարկեր | 4822 | | | | | | | | | |
| 4723 | -Պարտադիր վճարներ | 4823 | 220.0 | 220.0 | | 220.0 | 220.0 | | | | |
| 4724 | -Պետական հատվածի տարբեր մակարդակների կողմից միմյանց նկատմամբ կիրառվող տույժեր | 4824 | | | | | | | | | |
| 4730 | *ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ* (տող4731) | x | | | | | | | | | |
| | որից` | | | | | | | | | | |
| 4751 | -Կառավարման մարմինների գործունեության հետևանքով առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում | 4851 | | | | | | | | | |
| 4760 | *ԱՅԼ ԾԱԽՍԵՐ* (տող4761) | x | | | | | | | | | |
| | որից` | | | | | | | | | | |
| 4761 | -Այլ ծախսեր | 4861 | | | | | | | | | |
| 4770 | *ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ* (տող4771) | x | 4801.6 | 4801.6 | | 3869.6 | 3869.6 | | | | |
| | որից` | | | | | | | | | | |
| 4771 | -Պահուստային միջոցներ | 4891 | 4801.6 | 4801.6 | | 3869.6 | 3869.6 | | | | |
| 4772 | այդ թվում` համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ | x | | | | | | | | | |
| 5000 | Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ | x | *20586.0* | | *20586,0* | *20586.0* | | *20586,0* | *8150,0* | | *8150,0* |
| | այդ թվում` | | | | | | | | | | |
| 5100 | 1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող5110+տող5120+տող5130) | x | *20586.0* | | *20586,0* | *20586.0* | | *20586,0* | *8150,0* | | *8150,0* |
| | այդ թվում` | | | | | | | | | | |
| 5110 | *ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ* (տող5111+տող5112+տող5113) | x | | | | 4300,0 | | 4300,0 | | | |
| | որից` | | | | | | | | | | |
| 5111 | - Շենքերի և շինությունների ձեռք բերում | 5111 | | | | | | | | | |
| 5112 | - Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | | | | | | | | | |
| 5113 | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | | | | 4300,0 | | 4300,0 | | | |
| 5120 | *ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ* (տող5121+ տող5122+տող5123) | x | 20586.0 | | 20586.0 | 16086,0 | | 16086,0 | 8000,0 | | 8000,0 |
| | որից` | | | | | | | | | | |
| 5121 | - Տրանսպորտային սարքավորումներ | 5121 | 16000.0 | | 16000.0 | 16000.0 | | 16000.0 | 8000,0 | | 8000,C |
| 5122 | - Վարչական սարքավորումներ | 5122 | 2500.0 | | 2500.0 | | | | | | |
| 5123 | - Այլ մեքենաներ և սարքավորումներ | 5129 | 2086.0 | | 2086.0 | 86,0 | | 86,0 | | | |
| 5130 | *ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ* (տող 5131+տող 5132+տող 5133+ տող5134) | x | | | | 200,0 | | 200,0 | 150,0 | | 150.0 |

ՀԱՍՏԱՏՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Արինջ համայնքի
ավագանու 2013թ հուլիսի 10-ի թիվ 30-Ա որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

*(01.04. 2013թ. - 30.06.2013թ. ժամանակահատվածի համար)*

| Տողի NN | | Տարեկան հաստատված պլան | | | Տարեկան ճշտված պլան | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդամենը (ս.4 + ս5) | այդ թվում | | Ընդամենը (ս.7 + ս8) | այդ թվում | | Ընդամենը (ս.10 + ս11) | այդ թվում | |
| | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 8000 | ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ) | -20989,0 | -403,0 | -20586.0 | | | | | | |

ս

ՀԱՍՏԱՏՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Առինջ համայնքի
ավագանու 2013թ հուլիսի 10-ի թիվ 30 -Ա որոշմամբ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

*(01.04. 2013թ. - 30.06.2013թ. ժամանակահատվածի համար)*

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Տարեկան հաստատված պլան Ընդամենը (ս.5+ս.6) | Տարեկան հաստատված պլան այդ թվում՝ վարչական մաս | Տարեկան հաստատված պլան այդ թվում՝ ֆոնդային մաս | Տարեկան ճշտված պլան Ընդամենը (ս.8+ս.9) | Տարեկան ճշտված պլան այդ թվում՝ վարչական մաս | Տարեկան ճշտված պլան այդ թվում՝ ֆոնդային մաս | Փաստացի Ընդամենը (ս.11+ս.12) | Փաստացի այդ թվում՝ վարչական մաս | Փաստացի այդ թվում՝ ֆոնդային մաս |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 8010 | ԸՆԴԱՄԵՆԸ՝ (տող 8100+տող 8200), (տող 8000 հակառակ նշանով) | | 20989,0 | 403,0 | 20586,0 | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | |
| 8100 | Ա. ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (տող 8110+տող 8160) | | 20989,0 | 403,0 | 20586,0 | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | |
| 8110 | *1. ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 8111+տող 8120)* | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | |
| 8111 | 1.1. Արժեթղթեր (բացառությամբ բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության) | | | | | | X | | | X | |
| | որից՝ | | | | | | | | | | |
| 8112 | *- թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր* | 9111 | | | | | X | | | X | |
| 8113 | *- հիմնական գումարի մարում* | 6111 | | | | | X | | | X | |
| 8120 | 1.2. Վարկեր և փոխատվություններ (ստացում և մարում) (տող 8121+տող8140) | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | |
| 8121 | 1.2.1. Վարկեր | | | | | | X | | | X | |
| | որից՝ | | | | | | | | | | |
| 8122 | *- վարկերի ստացում* | 9112 | | | | | X | | | X | |
| | *որից՝* | | | | | | | | | | |
| 8123 | *պետական բյուջեից* | | | | | | X | | | X | |
| 8124 | *այլ աղբյուրներից* | | | | | | X | | | X | |
| 8130 | *- ստացված վարկերի հիմնական գումարի մարում* | 6112 | | | | | X | | | X | |
| | *որից՝* | | | | | | | | | | |
| 8131 | *<<պետական բյուջեին* | | | | | | X | | | X | |
| 8132 | *այլ աղբյուրներին* | | | | | | X | | | X | |
| 8140 | *1.2.2. Փոխատվություններ* | | | | | | | | | | |
| | որից՝ | | | | | | | | | | |
| 8141 | *- բյուջետային փոխատվությունների ստացում* | 9112 | | | | | | | | | |
| | *որից՝* | | | | | | | | | | |
| 8142 | *<< պետական բյուջեից* | | | | | | | X | | | X |
| 8143 | *<< այլ համայնքների բյուջեներից* | | | | | | | | | | |
| 8150 | *- ստացված փոխատվությունների գումարի մարում* | 6112 | | | | | | | | | |
| | *որից՝* | | | | | | | | | | |
| 8151 | *<< պետական բյուջեին* | | | | | | | X | | | X |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8152 | *<< այլ համայնքների բյուջեներին* | | | | | | | | | | |
| 8160 | *2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ (տող8161+տող8170+տող8190-տող8197+տող8198+տող8199)* | | 20989,0 | 403,0 | 20586,0 | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | |
| 8161 | 2.1. Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն | | | | | | X | | | X | |
| | որից՝ | | | | | | | | | | |
| 8162 | *- համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր* | 9213 | | | | | X | | | X | |
| 8163 | *- իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր* | 9213 | | | | | X | | | X | |
| 8164 | *- բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում* | 6213 | | | | | X | | | X | |
| 8170 | 2.2. Փոխատվություններ | | | | | | | | | | |
| | որից՝ | | | | | | | | | | |
| 8171 | *- նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր* | 9212 | | | | | | | | | |
| 8172 | *- փոխատվությունների տրամադրում* | 6212 | | | | | | | | | |
| 8190 | 2.3. Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը՝ (տող 8191+տող 8194) | | 20989,0 | 403,0 | 20586,0 | | | | 0 | | 0 |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | |
| 8191 | 2.3.1. Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ | 9320 | 17875,5 | 17875,5 | | | | X | 0 | 0 | X |
| | որից՝ | | | | | | | | | | |
| 8192 | *- ենթակա է ուղղման համայնքի բյուջեի վարչական մասից նախորդ տարում ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված՝ առկա պարտավորությունների կատարմանը* | | 403,0 | 403,0 | | | | X | | | X |
| 8193 | *- ենթակա է ուղղման համայնքի բյուջեի ֆոնդային մաս (տող 8191 - տող 8192)* | | 17472,5 | 17472,5 | | | | X | | | X |
| 8194 | 2.3.2. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեսկզբի մնացորդ (տող 8195 + տող 8196) | 9330 | 20586,0 | | 20586,0 | | X | | 0 | X | 0 |
| | որից՝ | | | | | | | | | | |
| 8195 | *- առանց վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարի* | | 3113,5 | | 3113,5 | | X | | 0 | X | |
| 8196 | *- վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարը (տող 9193)* | | 17472,5 | | 17472,5 | | X | | 0 | X | |
| 8197 | 2.4. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս | | | | | | X | X | X | X | X |
| 8198 | 2.5. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս | | | | | | | | X | | |
| 8199 | 2.6. Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում (տող8010- տող 8110 - տող 8161 - տող 8170- տող 8190- տող 8197- տող 8198 - տող 8210) | | | | | | | | | | |
| 8199ա | *որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը* | | | | | | X | | | X | |
| 8200 | Բ. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (տող 8210) | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | |
| 8210 | *1. ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 8211+տող 8220)* | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | *այդ թվում՝* | | | | | | | | | | |
| 8211 | 1.1. Արժեթղթեր (բացառությամբ բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության) | | | | | | X | | | X | |
| | որից՝ | | | | | | | | | | |
| 8212 | *- թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր* | 9121 | | | | | X | | | X | |
| 8213 | *- հիմնական գումարի մարում* | 6121 | | | | | X | | | X | |
| 8220 | 1.2. Վարկեր և փոխատվություններ (ստացում և մարում) տող 8221+տող 8240 | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | |
| 8221 | 1.2.1. Վարկեր | | | | | | X | | | X | |
| | որից՝ | | | | | | | | | | |
| 8222 | *- վարկերի ստացում* | 9122 | | | | | X | | | X | |
| 8230 | *- ստացված վարկերի հիմնական գումարի մարում* | 6122 | | | | | X | | | X | |
| 8240 | 1.2.2. Փոխատվություններ | | | | | | | | | | |
| | որից՝ | | | | | | | | | | |
| 8241 | *- փոխատվությունների ստացում* | 9122 | | | | | | | | | |
| 8250 | *- ստացված փոխատվությունների գումարի մարում* | 6122 | | | | | | | | | |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հուլիսի 2013թվականի N 31-Ա

## ***ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջներով,***համայնքի ավագանին որոշում է***՝

1.Հաստատել համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Առինջ գյուղական համայնքի հողային հաշվեկշիռը, համաձայն հավելվածի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐՇԱԼՈՒՅՍ ԱՆՏՈՆՅԱՆ
2. ԱՌԱՔԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ
3. ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
4. ԱՐԱՄԻԿ ՍԵԴՐԱԿՅԱՆ
5. ԳԵՂԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ
6. ԼԱՈՒՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
7. ՀԱՅԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ.
8. ՆԵԼԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ
9. ՍԱՄՎԵԼ ԾԱՌՈՒԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 հուլիսի 2013թվականի N 32- Ա

### *ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՌՈԶԱ ԾԱՌՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԾՆՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի պահանջներով, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1.Մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողական վճարը սահմանել զրո դրամ:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐՇԱԼՈՒՅՍ ԱՆՏՈՆՅԱՆ
2. ԱՌԱՔԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ
3. ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
4. ԱՐԱՄԻԿ ՍԵԴՐԱԿՅԱՆ
5. ԳԵՂԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ
6. ԼԱՈՒՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
7. ՀԱՅԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ.
8. ՆԵԼԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ
9. ՍԱՄՎԵԼ ԾԱՌՈՒԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

10 հուլիսի 2013թվականի N 33-Ա

## «ԱՌԻՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդված 1-ին մասի 14-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Ստեղծել «ԱՌԻՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը:
2. Հաստատել «ԱՌԻՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը համաձայն հավելվածի և օրենքով սահմանված կարգով այն ներկայացնել պետական գրանցման:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐՇԱԼՈՒՅՍ ԱՆՏՈՆՅԱՆ
2. ԱՌԱՔԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ
3. ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
4. ԱՐԱՄԻԿ ՍԵԴՐԱԿՅԱՆ
5. ԳԵՂԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ
6. ԼԱՈՒՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
7. ՀԱՅԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ.
8. ՆԵԼԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ
9. ՍԱՄՎԵԼ ԾԱՌՈՒԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության

Կոտայքի մարզի Առինջի գյուղական համայնքի

ավագանու 10.07.2013 թ. N 33-Ա որոշմամբ

Առինջ գյուղական համայնքի ղեկավար

__________ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

# «ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

գ. ԱՌԻՆՋ 2013 թ.

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Առինջ համայնքի
ավագանու 2013 թվականի
հուլիսի 10-ի N 33-Ա որոշման

# «ԱՌԻՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

## Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է համայնքի տնտեսությունը սպասարկելու նպատակով:

2. Այն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքներով, Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով և սույն կանոնադրությամբ:

3. Կազմակերպությունը ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված գործառույթներ, ստանձնում է անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:

Կազմակերպության հիմնադիրն է ԱՌԻՆՋի գյուղական համայնքը՝ հանձինս գյուղապետարանի (այսուհետ՝ Հիմնադիր):

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ 2210, ՀՀ Կոտայքի մարզ գ. ԱՌԻՆՋ, Մաշտոցի 51:

4. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

5. Կազմակերպության անվանումն է՝

***Հայերեն*** - «ԱՌԻՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

Կրճատ «ԱՌԻՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ.

***Ռուսերեն*** -«АРИНДЖИ АМАЙНКАИН ТНТЕСУТЮН» муниципальная некоммерческая организация

Կրճատ՝ «АРИНДЖИ АМАЙНКАИН ТНТЕСУТЮН» МНО.

***Անգլերեն*** - «ARINJ HAMAYNQAYIN TNTESUTYUN» municipal non-commercial organization

Կրճատ՝ «ARINJ HAMAYNQAYIN TNTESUTYUN» MNO:

6. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

7. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն Հիմնադրի որոշմամբ:

8. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա հաստատությունների և կազմակերպությունների հետ:

9. Կազմակերպությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

## 2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

10. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակն է համայնքի տնտեսության սպասարկումը:
11. Կազմակերպությունն իր գործունեության նպատակներին համապատասխան կազմակերպում է՝
ա) համայնքի աղբահանությունը.
բ) փողոցների, հրապարակների, այլ տարածքների սանիտարական մաքրումը.
գ) համայնքի սեփականություն համարվող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների, վարչական շենքերի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը և դրանց նորոգումը.
դ) փողոցների լուսավորման համակարգերի պահպանումը, նորոգումը ու սպասարկումը.
ե) հուշարձանների, պատմամշակութային արժեքների տարածքների պահպանումը և բարեկարգումը.
զ)ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման և այլ կառուցվածքների շահագործումը և վերանորոգումը.
է) համայնքային աղբավայրերի սպասարկումը.
ը)բնակավայրերի բարեկարգումը, կանաչապատումը և կանաչ տարածքների պահպանման աշխատանքները.
թ)համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների և ինժեներական այլ կառույցների պահպանումը և շահագործումը.
ժ) գերեզմանատների գործունեությունը և դրանց պահպանման աշխատանքները.
ի) Հիմնադրի որոշմամբ համայնքային տնտեսության պահպանման այլ ծառայություններ:
12. Կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվում է Հիմնադրի որոշմամբ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:
13. Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հիմնադիրը:
14. Համայնքի բյուջեով ուղղակի նախատեսված միջոցների սահմաններում մատուցվող ծառայությունների, աշխատանքների և ապրանքների գնումն իրականացվում է գնումների կատարման բանակցային ընթացակարգով՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու: Կազմակերպության կողմից համայնքային այլ ծառայություններ, աշխատանքներ կարող են մատուցվել կամ ապրանքներ գնվել §Գնումների մասին¦ Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

## 3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

15. Կազմակերպության կառավարումն իրականացնում են Հիմնադիրը՝ իր կողմից նշանակված գործադիր մարմնի՝ կազմակերպության տնօրենի միջոցով (այսուհետ՝ Տնօրեն):
16. Կազմակերպության Հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
17. Կազմակերպության Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝
ա) կազմակերպության հիմնադրումը, կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը.

բ) կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.
գ) կազմակերպության սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.
դ) կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.
ե) կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.
զ)կազմակերպության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.
է) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:
18.Համայնքի ղեկավարն իրականացում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
19. Համայնքի ղեկավարը՝
ա) նշանակում և ազատում է կազմակերպության Տնօրենին, սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
բ) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության գործունեության նկատմամբ.
գ)կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության Տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.
դ)լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.
ե)վերահսկողություն է իրականացնում կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.
զ)համայնքի ավագանու որոշմամբ կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում, համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.
է) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.
ը)իրականացնում է կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:
20. Տնօրենը՝
ա) իրականացնում է կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումը.
բ) Հայաստանի Հանրապետության օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է կազմակերպության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
21. Տնօրենը՝
ա) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.
բ) սահմանում է կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

գ)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.
դ) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր.
ե)աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.
զ)բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.
է)կատարում է աշխատանքի բաշխում իր աշխատակիցների միջև.
ը) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
թ)իրականացնում է կադրերի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.
ժ)վերահսկողություն է իրականացնում կազմակերպության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.
ժա) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.
ժբ) կազմում է կազմակերպության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հաստատման.
ժգ)իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և կազմակերպության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:
22. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր որոշման (կարգադրության) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է այլ անձ:
23. Կազմակերպության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, աշխատանքային պայմանագրերով, կազմակերպության առանձին ստորաբաժանումների ու աշխատանքային ներքին կանոնակարգով և իրավական այլ ակտերով:

## *4. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ*

24. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:
25. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
26. Հիմնադիրը սեփականության իրավունքով կազմակերպությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:
27. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

28. Կազմակերպության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում միայն դատական կարգով:
29. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը:
30. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը Հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ Հիմնադրի կամ կազմակերպության կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավել՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:
31. Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են: Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները Հիմնադրի սեփականությունն են:
32. Կազմակերպության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:
33. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:
34. Կազմակերպությունը ֆինանսավորում է Հիմնադիրը: Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջեից կատարվող հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:
35. Կազմակերպության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝
ա) Հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության արդյունքում գոյացած միջոցները.
բ) Բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.
գ)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և կազմակերպության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:
36. Կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## *5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ*

37. Կազմակերպությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 հուլիսի 2013թվականի N 34-Ա

## ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012Թ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 37-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով. ***համայնքի ավագանին որոշում է՝***

1.Համայնքի ավագանու 2012թվականի դեկտեմբերի 28-ի «Կոտայքի մարզի Առինջ գյուղապետարանի աշխատակազմի կառուցվածքը,աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 37-Ա որոշումը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն հավելվածի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐՇԱԼՈՒՅՍ ԱՆՏՈՆՅԱՆ
2. ԱՌԱՔԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ
3. ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
4. ԱՐԱՄԻԿ ՍԵԴՐԱԿՅԱՆ
5. ԳԵՂԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ
6. ԼԱՈՒՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
7. ՀԱՅԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ.
8. ՆԵԼԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ
9. ՍԱՄՎԵԼ ԾԱՌՈՒԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Առինջ համայնքի ավագանու
2012թ. դեկտեմբերի 28-ի № 37-Ա որոշման
Փոփոխված 2013թ.հուլիսի 10-ի №34-Ա որոշմամբ

## 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԻՆՋԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 17
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ դրամ/ | Ընդամենը |
|---|---|---|---|
| Քաղաքական պաշտոն | | | |
| Համայնքի ղեկավար | 1 | 237216 | 237216 |
| Հայեցողական պաշտոն | | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 194000 | 194000 |
| Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 80000 | 80000 |
| | | | |
| Համայնքային ծառայողներ | | | |
| Աշխատակազմի քարտուղար | 1 | 191000 | 191000 |
| Գլխավոր մասնագետ | 3 | 178000 | 534000 |
| Առաջատար մասնագետ | 4 | 132000 | 528000 |
| 1-ին կարգի մասնագետ | 1 | 126000 | 126000 |
| 2-րդ կարգի մասնագետ | 2 | 75000 | 150000 |
| ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | | |
| Վարորդ | 1 | 126000 | 126000 |
| Հավաքարար | 2 | 59524 | 119048 |
| Ընդամենը | 17 | 1398740 | 2285264 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

2013թ հուլիսի 10-ի
գ.Առինջ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հուլիսի 2013թվականի N 35-Ն

## *ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012Թ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 39-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով. ***համայնքի ավագանին որոշում է՝***

1.Համայնքի ավագանու 2012թվականի դեկտեմբերի 28-ի «Առինջ համայնքի 2013թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.
1/ Հավելվածի 2-րդ հատվածի 2922 տողի 6-րդ և 7-րդ սյունակների «1170,0»թիվը փոխարինել «1370» թվով
2/Հավելվածի 2-րդ հատվածի 3112 տողի 6-րդ և 7-րդ սյունակների «1049,0»թիվը փոխարինել «849,0» թվով
3/Հավելվածի 3-րդ հատվածի 4531 տողի4637 հոդվածի 4-րդ և 5-րդ սյունակների «400,0»թիվը փոխարինել «600,0» թվով
4/Հավելվածի 3-րդ հատվածի 4771 տողի 4891 հոդվածի 4-րդ և 5-րդ սյունակների «1049,0»թիվը փոխարինել «849,0» թվով
5/Հավելվածի 6-րդ հատվածի 2922 տողի 4637 հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակների «200,0»թիվը փոխարինել «400,0» թվով
6/Հավելվածի 6-րդ հատվածի 3112 տողի 4891 հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակների «1049,0»թիվը փոխարինել «849,0» թվով

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐՇԱԼՈՒՅՍ ԱՆՏՈՆՅԱՆ
2. ԱՌԱՔԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ
3. ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
4. ԱՐԱՄԻԿ ՍԵԴՐԱԿՅԱՆ
5. ԳԵՂԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ
6. ԼԱՈՒՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
7. ՀԱՅԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ.
8. ՆԵԼԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ
9. ՍԱՄՎԵԼ ԾԱՌՈՒԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ